Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին,
վարկային կազմակերպություններին,
Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյին,
ապահովագրական ընկերություններին,
ներդրումային ընկերություններին,
Արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորին,
Կենտրոնական դեպոզիտարիային
Ներդրումային Ֆոնդի Կառավարչին

Հարգելի տիկնայք և պարոնայք.

Խնդրում ենք այսուհետ ՀՀ կենտրոնական բանկի ՍԻ-Բի-Էյ-նեթ էլեկտրոնային համակարգի՝ LICENSING էլեկտրոնային հասցեի միջոցով ուղարկվող, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան կանոնակարգերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնել միայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահին ուղղված միջնորդագրին կից:

Լրացուցիչ հայտնում ենք, որ

- փաստաթղթերը պետք է շարադրված լինեն Unicode տառատեսակով,
- անպայման պետք է լրացնել հաղորդագրության Subject դաշտը,
- միջնորդագրում նշված կից փաստաթղթերի էջերի քանակը և փաստաթղթերի ցանկում նշված փաստաթղթերը պետք է համապատասխանեն փաստացի կցվող փաստաթղթերին և դրանց էջերի քանակին:

Հարգանքով՝

Իրավաբանական վարչության պետ՝ Վարուժան Ավետիքյան

Սույն գրության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության Լիցենզավորման ու գրանցման առաջին և երկրորդ բաժիններ, հեռ.՝ 59-29-78, 59-29-85, 59-29-87, 59-29-88, 59-29-96: